ԱՄԻՐԱՆԵՐԻ ԴԱՍԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
(XVIII դ. II կես – 1860-ական թվականներ)*

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Պոլսահայ վերնախավում իրենց նշանակալիությամբ առանձնացող խոջաներին ու չելեբիներին XVIII դ. երկրորդ կեսին փոխարինելու եկավ ամիրայական դասը, որի ազգային ու տնտեսական իշխող դիրքերը հարատևեցին մինչև արևմտահայերի ազգային սահմանադրության գործողությունը՝ 1860-ական թվականները: Անշուշտ, իրենց բնութագրական առանձնահատկություններով ամիրաները տարբերվում էին XV–XVII դդ. խոջաներից ու չելեբիներից: Եթե խոջաները ներկայացնում էին հայ առևտրական կապիտալը և գործում էին միջազգային առևտրում, իսկ չելեբիները վաշխառուական ֆինանսական ոլորտում՝ վարկավորելով նաև օսմանյան պաշտոնյաներին, ապա ամիրաները գործում էին ոչ միայն Կ. Պոլսում, այլև կայսրության տարբեր գավառներում՝ վարկավորելով գլխավորապես վարչական վերնախավին: Զուտ ֆինանսական գործառնությունների առումով ամիրաները հանդես էին գալիս որպես վաշխառու-չելեբիների հաջորդներ, սակայն շատ ավելի լայն շառավիղներով և օսմանյան վարկային համակարգում գործառութային լուրջ նշանակությամբ: Մյուս կողմից, ճանաչված լինելով որպես առանձին դաս և մտնելով սեղանավոր-ամիրաների կորպորատիվ կազմակերպության մեջ, ամիրաների մի մասը, թեկուզ և սահմանափակ թվով, օգտվում էր ժառանգական պաշտոնակալության իրավունքից (հավանաբար, այստեղ գործել է նախադեպի նորմը, որ այնքան հարգի էր օսմանյան ավանդական հասարակության մեջ): Դրա ուժով Պալյան ամիրաները զբաղեցնում էին արքունի ճարտարապետների պաշտոնը, Տյուզյանները՝ ոսկերչապետների և փողերանոցի (դրամահատարան) գլխավորի, Տատյանները՝ վառոդապետի և զինագործարանների տնօրենի պաշտոնը: Հիրավի, օսմանյան պետությունը պաշտոնապես ճանաչում էր ամիրաների դասը՝ ամիրայական կոչում շնորհելով հայկական և օսմանյան միջավայրերում աչքի ընկած անհատներին: Հայտնի է, օրինակ, որ Տատյան տոհմի ավագ Մահտեսի Առաքել Տատը (1753–1812, Ակնի Ապուչեխ գյուղից) ամիրայի կոչում է ստացել 1795 թ., հանրահայտ Հարություն Պեզճյանը (1771–1834) ամիրայի կոչում է ստացել Գրիգոր ամիրա Պալյանի աջակցությամբ (հավանաբար, XIX դ. առաջին տասնամյակին, երբ աչքի ընկնող պաշտոն էր վարում փողերանոցում)՝ հանրության մեջ հայտնի դառնալով որպես Գազեզ Արթին ամիրա[1]:

---

[1] *Ե. Պ ո ղ ո ս յ ա ն. Պալյան գերդաստանը, Վիեննա, 1921, էջ 22:*

Նախքան «ամիրա» (արաբ. տեր, հրամայող) պատվանվանն անցնելը, նկատենք, որ պոլսահայ համայնքում և՛ ազգը, և՛ նրա երևելիները երկուստեք բավականաչափ զգայուն էին պատվանունների նկատմամբ: Պատվանուններն արտացոլում էին, ինչպես ամենուրեք, այն կրողի սոցիալական կեցությունը, նրա դիրքն ու հարգը ազգային միջավայրում: Մոտ երեք դար՝ XV–XVIII դդ. պոլսահայ վերնախավում գրեթե անվթար և շարունակաբար գործածվող «չելեբի» և «խոջա» պատվանունների կողքին XVII դ. սկզբից երևելիները սկսում են մեծարվել «մահտեսի» պատվանունով, իսկ XVIII դ. առաջին տասնամյակներում, պատրիարք Կոլոտի և Գրիգոր Շղթայակրի ժամանակներում, երբ վերջինս ընտրվեց Երուսաղեմի պատրիարք (1715 թ.), նրան սատարող երևելիները խմբովին հիշվում են «մահտեսի» հորջորջմամբ: Սրանց ցանկը անուն առ անուն մեջբերում է Հաննան՝ իր հայտնի աշխատության մեջ՝ «Կեսարացի մահտեսի Մելիտոն՝ այր երեւելի ի դուռն արքունի, Ապուչեխցի մահտեսի Մուրատեան, մահտեսի Յարութիւն Թէվէքէլեան, մահտեսի Յարութիւն, կեսարացի մահտեսի Սարգիս… եւ այլք բազումք»[2]: 1767 թ. Կ. Պոլսի Ս. Գեորգ եկեղեցու շուրջ խմբված թաղական գլխավորների համար ևս ամենից ավելի առատ գործածվում է նույն պատվանունը՝ «մահտեսի Հյուտավերտին, Սոխիկ օղլու մահտեսի Յակոբը» և այլն, որոնց բոլորին էլ պատրիարք Գր. Պասմաճյանը հաստատել էր այդ թաղի եկեղեցու նազբրներ (վերակացուներ)[3]: Թաղի եկեղեցական էր կարգվել «ոսկերիչ խոճա Ռափայելն»՝ միակ խոջան նշված պաշտոնատար անձանց մեջ: Այսուհանդերձ, «մահտեսի» պատվանունը, որ անմիջապես նախորդում է «ամիրա» կոչմանը, որոշ խորհրդածությունների տեղիք է տալիս: «Մահտեսի» պատվանունը, պետք է կարծել, XVII դ. և դրանից էլ առաջ պարզապես տեղեկացնում էր, որ այն կրողը Երուսաղեմ ուխտի գնացած անձ է, որ մեծացնում էր նրա հեղինակությունը իր կրոնաէթնիկական միջավայրում: «Մահտեսի» կարող էին կոչվել և չելեբիները, և՛ խոջաները, և՛ հետագայում ամիրաները, և՛ կանայք և ցանկացած մեկը՝ վերոհիշյալ պայմանով: Սակայն, կարելի է կարծել, որ «մահտեսի» պատվանունը հետագայում՝ XVIII դ., ձեռք է բերել յուրահատուկ՝ դասային իմաստ՝ մատնանշելով այն կրողի բարձր տեղն ու դիրքը պոլսահայ համայնքի հիերարխիական համակարգում: Դրանով կարծեք նախապատրաստվում էր «ամիրա» պատվանվան հատուկ սոցիալական արժեքը, նրա ճանաչումը որպես առանձնաշնորհյալ խավի՝ ոչ միայն հայ համայնքի, այլև օսմանյան պետության կողմից: 1753 թ. Կ. Պոլսում (Կում կափուի Մայր եկեղեցում) Էջմիածնի կաթողիկոս Ալեքսանդրի ընտրությանը ևս - մասնակցել է մահտեսիների մի պատկառելի խումբ, թեև այստեղ կան նաև բավական թվով խոջաներ, պարոններ և այլն, և անգամ «մահտեսացու անձինք», կարելի է կարծել՝ մահտեսի կոչման հավակնորդ անձինք[4]: Շատ ուշագրավ է, որ այս նույն ձեռագրում կա ընդամենը մեկ ամիրայի՝

---

[2] *Ստորագրութիւն Սրբոյ քաղաքին Յերուսաղէմի քննութեամբ համառօտեալ ի Հաննա եւ ի Մարինոս պատմագրաց, Յերուսաղէմ, 1859, էջ 195:*

[3] *Տե՛ս Բաբգէն աթոռակից կաթողիկոս. Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 1229–1230:*

[4] *Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավ. 336:*

Պետրոս ամիրայի ստորագրությունը, որ մեր ձեռքի տակ եղած՝ այդ պատվանունը ամրագրող հնագույն ձեռագիրն է: Հնարավոր է, դրանից դեռ մի քանի տարի, անգամ տասնամյակ էլ առաջ «ամիրա» պատվանունը շրջանառված լիներ պոլսահայերի մեջ: Սակայն այս միակ, այս պատվանվան հիշատակության ամենավաղ օրինակը բավական է ասելու, որ «ամիրա» պատվանունը, ինչպես և դրա ճանաչումը օսմանյան պետության կողմից տեղի է ունեցել XVIII դ. երկրորդ կեսին: Ավելացնենք, որ «մահտեսի» տիտղոսը դժվարությամբ էր տեղի տալիս շատ ավելի նոր՝ «ամիրա» պատվանվանը և այն էլ միայն 1780–1790-ականի վերջերին և անգամ մի կարճ ժամանակ գոյատևելով դրա հետ միասին: 1780 թ. հիշվում են մահտեսի Հարություն ամիրան՝ սարաֆների (սեղանավորներ) գլխավորը (սարաֆլար քյահյասը), 1799 թ.՝ մահտեսի Ստեփանոս ամիրան և մահտեսի Պետրոս ամիրան[5]: Շատ հիմնավոր է ամիրաների դասի վերաբերյալ ուշագրավ աշխատության հեղինակ Հ. Բարսումյանը, ով կարծում է, որ հիշատակարաններում, դամբանագրերում և այլուր «ամիրա» պատվանունը լայն տարածում է գտել 1760-ական թվականներից հետո, ընդսմին հենվելով Թ. Ազատյանի վկայակոչած՝ 1758 թ. մի հիշատակարանի վրա[6]: Ինչպես տեսանք, Մատենադարանում պահվող 1753 թ. ձեռագիրը՝ Պետրոս ամիրայի ստորագրությամբ, դրանից հին է հինգ տարով: Համենայն դեպս, XVIII դ. վերջին «ամիրա» պատվանունը արդեն ստացել էր լայն կիրառություն, հատկապես այն բանից հետո, երբ այն սկսեց կրել Կ. Պոլսի հարուստ հայ լումայափոխների՝ սեղանավորների դասը: Անցնենք այս վերջինի սոցիալական նկարագրին:

Իրենց հայտնության և տնտեսական վերելքի համար սեղանավոր-ամիրաները պարտական էին իլթիզամի՝ հողի վարձակալության իրավունքին, որը հատկապես XVIII դ. ընդարձակ կիրառություն գտավ կայսրության մեջ և որը սկզբնավորվել էր դեռևս նախորդ դարում: Մայրաքաղաքի թուրքական վերնախավի մարդկանցից, բայց և հիմնականում գավառական փաշաներից ստանալով որևէ սեփականության կամ հողի ու դրա բերքի հարկահավաքման, անգամ վաճառքի իրավունքը, ամիրա-սեղանավորները առատորեն վարկավորում էին փաշաներին, հոգում նրանց ֆինանսավորման խնդիրները՝ իրենք ևս իրենց չափաբաժինը յուրացնելով ստացված եկամուտներից: «Ամիրաների դասը,– գրում է ակադ. Ա. Հովհաննիսյանը,– կապված էր հին, ֆեոդալական Թուրքիայի հետ: Հասարակական հինավուրց այդ շերտի միլիոններով հաշվվող հարստությունը դիզվել էր կապալահարկերի, պետական մատակարարումների, բարձր պաշտոնյաների վարկավորման և նման այլ միջոցներով: Ամիրաների պետքերին էր ծառայում Անատոլիայի և Ռումելիայի բանկային ընկերությունը, որի միջոցով հարստահարության աղբյուր էին դարձնում երկրի գյուղացիության հարկումը: Ֆինանսավորելով ռազմական և վարչական հիմնարկների պետերին՝ ամիրաները տարածում էին իրենց ազդեցությունը պետական ապարատի վրա: Հաճախ նրանցից էր կախված սադրազամների

[5] *Յ. Մ ր մ ը ր ե ա ն. Մասնական պատմութիւն հայ մեծատուններու, 1400–1900, Կ. Պոլիս, 1910, էջ 72–73:*

[6] H. L. B a r s o u m i a n. The Armenian Amira Class of Istanbul. Yerevan, 2007, p. 38.

ու փաշաների բախտը: Նրանց միջից ելնում էին մարդիկ, որոնք դիրք ու ազդեցություն էին նվաճում անգամ սուլթանների պալատում»[7]:

XIX դ. եվրոպական հետազոտողներից Մ. Ուբիչինին XVIII դարավերջի և XIX դարի առաջին կեսի պոլսահայ համայնքը բաժանում էր չորս դասի՝ հոգևորականություն, սարաֆներ, գրական և մասնագիտական դաս, արհեստավորներ և առևտրականներ[8]: Գործառութային իմաստով սեղանավոր-ամիրաները շարունակությունն էին նախորդ դարերի չելեբի վաշխառուների, սակայն գործողության շառավղով և նյութական կարողություններով շատ ավելի հզոր ու ազդեցիկ, քան նրանք: Որպես սոցիալական նոր խավ, նրանք պարտական էին թիմարի քայքայմանը, թիմարն ամբողջովին կամ մաս առ մաս վարձակալության տալուն, որ հասցրեց մեր նշած՝ հողի վարձակալության համակարգի (իլթիզամ) անախընթաց լայն տարածմանը XVIII դարում: Սեղանավոր-ամիրաների մեծ մասը Կ. Պոլիս էին անցել գավառներից և իրենց դրամագլուխները բազմապատիկ չափերով ընդլայնել սեփական ձեռներեցության ու ձիրքի շնորհիվ: Հ. Բարսումյանի հաշվումներով «ամիրա» կոչվող 165 անձանց մոտ կեսը Կ.Պոլիս էր անցել Ակնից, ոմանք էլ Վանից, Պարսկաստանից և այլն[9]: Ամիրաների մյուս մասը պետական կապալներով հարստացած էսնաֆի (առևտրաարհեստավորական խավ) գլխավորներն էին, որոնց ներկայացուցիչը դեռևս XVII դ. երկրորդ կեսին անգամ բազմել էր պատրիարքի աթոռին՝ ի դեմս Սարգիս Էքմեկճու (1679–1680 թթ.):

Ամիրաները սուլթանների կողմից ճանաչվում էին որպես առանձին արտոնություններ վայելող դաս՝ սկսած հայ համայնքում նրանց առանձնաշնորհյալ տեղի ամրագրումով ու վերջացրած նրանց միջոցով համայնքի հետ հարաբերվելու և ներգործելու իմաստով: Սակայն ոչ միշտ էր, որ ամիրաներն իրենց դիրքն ու ազդեցությունը կարողանում էին հավասարակշռել օսմանյան բռնապետության հեղհեղուկ քմահաճույքներին, պալատական և վարչական սադրանքներին: Պալատական էլիտայի կտրուկ փոփոխության հետևանքով գլխատվեց իր ազդեցության գագաթնակետին հասած Յաղուպ աղան (1752 թ.), մի կարճ ժամանակ անսպասելիորեն շնորհազրկվեց արքունի ճարտարապետ Գրիգոր Պալյանը, ով իր պաշտոնը ստացել էր դեռևս սուլթան Սելիմի ժամանակ (1788–1807 թթ.)՝ այն վարելով 30 տարի[10]: Շատ ավելի դաժան հալածանքների զոհ դարձան Տյուզյանները: 1819 թ. օգոստոսի 17-ը աղետալի օր դարձավ նրանց համար, այն ժամանակ, երբ, թվում է, նրանք ապահովված պետք է լինեին իրենց մրցակից թուրք ակնագործների ոտնձգություններից (Տյուզյան եղբայրներից Գրիգորը փոդերանոցի տնօրենն էր, Սարգիսը՝ ոսկերչապետը): Պետական միջոցները յուրացնելու ակնհայտորեն թխված մեղադրանքով նրանք

---

[7] *Ա. Գ. Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 348:*

[8] M. A. U b i k i n i. Letters on Turkey, part II, London, 1856, p. 310.

[9] H. B a r s o u m i a n. Dual Role of the Armenian Amira Class within the Ottoman Government and the Armenian Millet (1750–1850). In: Christians and Jews in the Ottoman Empire. N. Y., 1980, p. 172.

[10] *Ե. Պողոսյան. նշվ. աշխ., էջ 23–24:*

ձերբակալվեցին ու գլխատվեցին նույն թվականի հոկտեմբերի 2-ին: Նույն օրը Տյուզյանների Ենիքյոյի ամառանոցում պատժիչները կախեցին նրանց զարմիկներ Միքայելին ու Մկրտչին: Աքսորվեցին Կարապետ և Հակոբ Տյուզյանները, որոնք մայրաքաղաք վերադարձան միայն երեք տարի անց՝ 1822 թ.[11]: 1820 թ. շնորհազրկվեց և Լեմնոս աքսորվեց Հարություն ամիրա Պեզճյանը, ով մեկ տարի անց վերադարձավ ու վերստանձնեց փողերանոցի գլխավորի պաշտոնը[12]: 1820 թ. Կ. Պոլսում առաքելական և կաթոլիկ հայերի ընդհարման ժամանակ ձերբակալվեցին, ի թիվս այլոց, մի քանի ամիրաներ, որոնցից Գ. Ամիրա Սաքայանը՝ 80-ամյա մի ծերունի, գլխատվեց, իսկ մի շարք ամիրաներ աքսորվեցին Արշիպելագի կղզիներ[13]:

Ամիրաները դրական լուրջ դեր են կատարել Կ. Պոլսի հայության պատմության մեջ, մեծապես նպաստել նրա նյութական և հոգևոր կարիքների բավարարմանը, ձգտել օսմանյան իշխանություններից ստանալ առավելագույն հնարավորը՝ համայնքի սեփականությունների պահպանման ու դրանց եկամուտների հանրօգուտ գործադրման համար: Հ. Պեզճյանի ջանքերով արտոնվեց վերաշինել Կում կափուի Մայր եկեղեցու և այլ եկեղեցիների վերաշինությունը, կառուցվեցին Սկյուտարի Ս. Խաչ և Խասքյոյի Ս. Ստեփանոս եկեղեցիները: Նրա կարևոր մյուս գործերից են համայնքի Մայր դպրատան վերակառուցումը (1830 թ.), որ կոչվեց Պեզճյան վարժարան և Ս. Փրկչյան ազգային հիվանդանոցի նոր շենքի կառուցումը (1833 թ.): Վերջինիս շինության մեծ մասի ծախքերը հոգացել է Պեզճյանը և մասամբ Ճ. Փափազյան, Հ. Կելկելյան, Ե. Երամյան ամիրաները[14]: Հ. Պեզճյանը խոշոր ծառայություններ մատուցեց օսմանյան պետությանը՝ կազմակերպելով Ռուսաստանին 1828–1829 թթ. պատերազմի հետևանքով ռազմատուգանքի մի մասի վճարման գործը, ընդսմին, դրանում ներգրավելով ոչ միայն Թուրքիայում բնակվող, այլև արտասահմանցի դրամատերերին[15]: Ազգին իրենց տրամադրած նվիրատվություններով աչքի են ընկել Տյուզյան, Պալյան, Տատյան, Միրիճանյան, Կյոչեյան և բազմաթիվ այլ ամիրաներ: Այսուհանդերձ, ամիրայական դիրքի և ազգասիրության բարձրակետը մնում է այսպես կոչված, «Պեզճյանի դարաշրջանը», որ ավարտվում է Հ. Պեզճյանի մահվամբ (1834 թ.): Մի քանի տարի անց վրա հասավ թանզիմաթի բարեփոխումների ժամանակաշրջանը (1839 թ.), որ տնտեսական լուրջ հարվածներ հասցրեց ամիրաների նյութական կարողություններին. թանզիմաթի ուժով հարկահավաքման գործառույթից զրկված գավառական փաշաները այլևս կարիք չունեին սեղանավոր-ամիրաների: Օսմանյան պետությունը ևս գտավ նոր վարկատուների, հատկապես Ղրիմի պատերազմից հետո (1856 թ.)՝ ի դեմս եվրոպական բանկերի, որոնք փոխատվական իրենց մեծ ծավալներով պարտային կախվածության մեջ պետք է դնեին կայսրությունը եվրոպական տերություններից:

---

[11] *Գ. Մ է ն է վ ի շ ե ա ն. Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիւզեանց, Վիեննա, 1890, էջ 31–33:*

[12] *Մ. Օ ր մ ա ն յ ա ն. Ազգապատում, հ. Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 4001–4003:*

[13] *Նույն տեղում, էջ 4002:*

[14] *Նույն տեղում, էջ 4212–4214:*

[15] *Նույն տեղում, էջ 4208–4209:*

Պոլսահայ համայնքում ևս նոր դրսևորումներ ստացավ ազգային ինքնագիտակցության խորացման ընթացքը և ամիրաների միահեծան իշխանությունը պետք է տեղի տար նոր ժամանակների պահանջներին, ամիրաների կամքը և անգամ շռայլ բարերարությունը՝ հանրային մղումներին: 1840-ական թվականներին պոլսահայ էնաֆի և ամիրայության բախումները Սկյուտարի ճեմարանի շուրջ՝ ճեղքեր մտցրեցին ամիրայական, մինչ այդ անտարակուսելի համարվող իշխանությանը համայնքի ներսում: 1840-ականի երկրորդ կեսին, պատրիարք Մատթեոսի ժամանակ, նրանք հարկադրված էին Կ. Պոլսի ազգային վարչության մեջ ընդգրկել նաև առևտրաարհեստավորական խավերի ներկայացուցիչներին: Հաջորդ՝ 1850–1860-ական թվականներին, պոլսահայ համայնքում, որպես այս շարժումների և Օսմանյան Թուրքիայի արտաքին սայթաքուն քաղաքական կացության արդյունք, ծայր առավ արևմտահայերի (և ոչ միայն արևմտահայերի) սահմանադրական շարժումը, որը փոխեց պոլսահայ ազգային կառույցների ողջ նկարագիրը՝ անցյալ դարձնելով ամիրայության նշանակությունն ու բուն իսկ գոյությունը: Պատահական չէ, հետևաբար այն, որ արևմտահայերի ազգային սահմանադրության դեմ պայքարող փոքրիշատե նշանակալի ուժը պահպանողական հոգևորականության հետ միասին՝ ամիրայությունն էր, որի պարտությունը նրան վերջնականապես դուրս էր մղելու ազգային իրականությունից: Դրան հակառակ, պետք է նշել նաև, որ հենց ամիրայական հայտնի տոհմից էր ճարտարապետ Նիկողայոս Պալյանը, ով բավական լուրջ ներդրում ունեցավ արևմտահայերի 1860 թ. ազգային սահմանադրության մշակման գործում: Ամիրայական շառավիղները դեռևս կայծկլտում էին այս կամ այն պաշտոնում անգամ 1870–1880-ական թվականներին, բայց դրանք ընդամենը եզակի հիշեցումներ էին պոլսահայ համայնքի և ամբողջ Օսմանյան կայսրության մեջ երբեմնի ազդեցիկ մի դասի մասին, որը գործեց ավելի քան մեկ դար (1750–1860 թթ.)՝ խոր հետք թողնելով և՛ մեկի, և՛ մյուսի պատմության մեջ:

СОСЛОВИЕ АМИРАИ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ КОНСТАНТИНОПОЛЯ
(II половина XVIII в. – 1860-е годы)

АЛЬБЕРТ ХАРАТЯН

Р е з ю м е

Сословие амираи в константинопольско-армянской действительности насчитывает более 100 лет. Опираясь на султанский двор и губернских пашей, амираи получали право на аренду земли – «илтизам», а также обладали правом распоряжения доходами от собственности. Часть амираев по наследству (в силу прецедента) занимала государственные должности. Среди них наиболее известными были дома Татянов, Тюзянов и Палянов. Распад экономической мощи амираев пришелся на эпоху Танзимата. В свою очередь национальная консти-

туция 1860-го года и либерализация контстантинопольской армянской общины вытеснили их с передовых позиций.

THE AMIRA CLASS IN THE ARMENIAN COMMUNITY OF CONSTANTINOPLE (the 2nd half of the 18th century – the 1860s)

ALBERT KHARATYAN

S u m m a r y

The amira class within the Armenian community of Constantinople existed more than a century. The amiras occupied high positions in the administrative-economic hierarchy of the Ottoman state, recognized as such by the Ottoman Sultan and acting as principal merchants, armourer, chief architects, jewellers, etc. A considerable part of the amira, as bankers financed the Ottoman high administrative stratum, instead of getting the rental right of collecting taxes. The amiras had an influential power in the Armenian community, building hospitals, schools, orphanages, and bequeathing estates, financial values to the nation, etc. Among them were the houses of the Tatyans, the Tyuzyans and the Palyans. In 1860, due to the Tanzimat reforms the amiras lost their leading role. After adoption of the Constitution they completely vanished as a class.